

ԱՍԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ԶՕՐ ԾՆՆՆԵԱՆ ՊԱՏԳԱՍԸ

ԲԵԹՂԵՀԷՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐԷՆ.

ԺՌՈՎՈՒՐԴ ՀԱՅՈՑ ՈՐ ՅԵՐՈՒՍԱԼԷՄ, Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ի ՍՓԻՌՈՍ ԱՇԽԱՐՀԻ

Ծննդեան հրաապասում այս գիշերուան մէջ, նորէն կը լսուի հրե-
սակներու բերնով աշխարհին տրուած երկնային աւեփաը՝ «յերկիր խաղա-
ղութիւն եւ ի մարդիկ հանութիւն»:

Ստեղծագործութեան հրաալի իրողութենէն յետոյ, մեր այս երկրին
վրայ պատահած գերագոյն դէպքը՝ Ծնունդն է Յիսուսի, ասուածային յայտ-
նութեան ժայթքը, որ թեւաւոր վերելով կը հանէ զմեզ երկրէն երկինք, հան-
դիսասես ըլլալու մարմնով երեցող Ասուծոյ, որ յալիսեմական փառքերու
մէջ կը ծարուի:

Յիսուսի Ծնունդը, մարդուն եւ Ասուծոյ եղանակ հանդիպման, այ-
սինքն կոչուած որդիին եւ Հօր վերագիտին տօնն է, ոսկի օղակը երկինքի
եւ երկրի: Մանուկը որ կը ծնի իրեն օրորոց ընտելու բովանդակ աշխարհը,
մարմնացած սէրն է, երկիրը տափնող հոգին, որ կը բանայ երկինքի սիրքը
եւ մարդուն արգանդը, սփանչելի եւ նոր խորհուրդով մը:

Խորհուրդն է ան ասուածային սիրոյն, որ յայտնուեցաւ Բեթղեհէմի
Այրին մէջ Տիրոջ մարմնառութեամբ, երբ անբաւելին երկնի եւ երկրի խան-
ձարուրի մէջ փաթթուեցաւ: Այս մեծ ու փրկարար դէպքը, որուն շնորհիւ
սիրոյ եւ ընդհանուր եղբայրութեան մը բեղմնաւոր սկզբունքները բարոզուե-
ցան ընդ ծագս տիեզերաց, երկնաւոր Հօր մը որդիները ըլլալու ազատութիւնը
շնորհեց ամենուս:

ապրելու, գոյատեւելու եւ հայրենաւէն աշխատանքով նոր բարձունքներ նուա-
նելու երազանքներին:

Այո՛, ամէն գնով եւ ամէն բանից վեր, ամէն հայ մարդ, Հայաստա-
նում թէ արտասահմանում, պիտի կամենայ թուլացումը միջազգային լարուա-
ծութեան եւ ամբապնդումը աշխարհի խաղաղ գոյավիճակի:

Եւ Մենք հաւատում ենք թէ ողջմտութիւնը եւ բարի կամեցողութիւնը
անհրաժեշտօրէն կը յաղթանակեն եւ ազգերի ղեկավարները իմաստութիւնը
կ'ունենան ապահովելու խաղաղ գոյակցութիւնը եւ գործակցութիւնը մեծ ու
փոքր պետութիւնների միջեւ: Ասուծոյ եւ բնութեան ուժերի ամենազօր գե-
րագոյն օրէնքն է՝ միշտ յաղթութիւնը կեանքի՝ ընդդէմ մահուան:

Այդ է նաեւ խորհուրդը եւ ասուածային պատգամը մանուկ Յիսուսի
Սուրբ Ծննդեան:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, ե-
րկիցին ընդ ձեզ» ամէն:

6 Յունուար 1982

Յաւերժական նորստեղծման կամ մշտնորոգուող յաւերժի յայնուօրեան խորհուրդին տօնն է որ կը յիշատակենք այսօր Մննդեան տօնին մէջ: Ժողովուրդը, որուն զգացումը գերիվեր է իր մտածումէն, կը հաւատայ որ ամէն մնունգի նորէն կը ծնի Յիսուս: Խորհրդաւոր նշանաւորութիւն մը ունի ժողովուրդին այս մտածումը որ պարուն է քրիստոնէական իր հաւատքին: Իրեն համար՝ յաւերժը անկենդան իրականութիւն մը չէ, տեղեկին վերեւ ստատուող, այլ յաւիտեանականութեան յայնուօրեանն է, ուժի, լոյսի եւ սիրոյ, որ կը միջամտէ ժամանակին մէջ մեզի բերելու անտեսքը թէ մարդուն տրուած է գերագոյն հաւատարմի իր գոյութիւնը յաւերժելու աստուածայինին մէջ:

Աւելարհ պէտք ունէր այս գիշեր մարմին առնող այդ Սուրբ Հոգիին, որ կրակի պիտի վերածէր մեր կալը՝ պղտոր եւ գունատ մեր խորհուրդներուն պարգեւելու ստեղծութիւն հրաշքը: Հոգին, որ չի գար մեզի այս աշխարհի ուժերէն, ժայթքն ու բխումն է լոյսի եւ կը բերէ հաւատարմի, այլեւ մարդու տրուած, իր կեանքը այլակերպելու, պայծառակերպելու աստուածայինին մէջ եւ անկելու զայն յաւերժին:

Աստուածորդին, որուն Մնունգը կը փառաւորենք, սկիզբ մը եւ վախճան մըն է մարդկային պատմութեան մէջ, անդունդ մը աստուածային խորհուրդներու, տեսնողներու նայածութիւն առջեւ՝ լոյս մը, մեր խաւարին վրայ բացուած, յոյս մը՝ մեր հոգիին մէջ ոսկիացող: Այդ երազը չէ մեռած եւ չի կրնար մեռնիլ: Ան երբեմն փայլատակում մըն է երկինքէն մեզի, ժամ մը, յաւիտեանականութեամբ լեցուն, խօսք մը՝ դժոխքները սարսուղ, ժպիտ մը՝ բուռնութիւնները ամոհող:

Աստուած, որ վասն մեր մարդացաւ, չի ծնիր դարձեալ, այս գիշեր, ընդունելու համար հովիտներու երկիւղած երկրպագութիւնը կամ այս աշխարհի թանկագին նուէրները՝ ոսկին եւ խունկը: Կու գայ Ան փնտռելու իր սերմանած սիրոյն՝ խաղաղութիւնը մարդոց միջեւ եւ մարդոց մէջ:

Ժողովուրդ Հայոց, դուն դարերով խաղաղութեան ծարաւն ու իղձն ես ունեցեր, ազատութեան տենչանքին չափ խոր: Քեզի պարտաւորուած պայմաններուն արգասիքը չէ միայն պատեալը այս ըղձաւորութեան, այլ որովհետեւ դուն կը հաւատաս թէ խաղաղութեան, սիրոյ եւ համերաժխութեան աշխարհի մը մէջ միայն կարելի է իրագործել Աստուծոյ թագաւորութիւնը եւ լեցնել մարդուն կարօքը: Խաղաղութեան զգացումը լոյծ, սարսամ եւ վերացական յղացք մը չէ եղած քեզի համար, այլ ջիղերով զգալի մարմնացեալ հեւք մը, քու ըղձանքի թափին մէջ երկինքները խորակելու չափ:

Դուք, զաւակներ Հայաստանեայց եկեղեցւոյ ի սփիւռս աշխարհի, որ կը հաւատաք Աստուծոյ Որդիին մարմնով երեւցալուն, մեզի հետ միասին ձեր երկիւղած էութեան խորերէն, անգամ մը եւս արեւտեղէք այս գիշեր ծնող սիրոյ եւ խաղաղութեան Իշխանէն՝ որ փարատքն մէզն ու մտախնայող, չհանան չարիքն ու յուսահատութիւնը, սարագունին տալանայն ու տխրութիւնը, եւ լինի սէր, խաղաղութիւն եւ արդարութիւն բոլոր ազգերուն, որոնց սուրբ երազը, երջանիկ այս ծնունդով անգամ մը եւս կը հիստուի այս սուրբ գիշերէն:

Վասնզի ոչ մէկ ասեմ երկինքը չէ ունեցած այսօրվան արցունք եւ արիւն, եւ մարդկութիւնը այսօրվան տառապանք, եւ այս ամէնը՝ իրմէ իրեն: Կ'ապրինք անկման մէջ եղող աշխարհի մը մէջ, փեռելիսուած՝ անբուժելի հակասութիւններով: Մարդկութիւնը, իբրեւ բարոյական հասկացողութիւն, հոգեվարէ մը կ'անցնի, նման անոր՝ զոր ունեցաւ հին աշխարհի վախճանին, երբ Քրիստոնէութիւնը այդ կործանումին կը բերէր կարեղի փրկութիւնը, նիւթէն եւ ֆայտայումէն դուրս փաշտելով անդնդասոյց ոգեղէնը մարդուն:

Օրերը որ մերն են լեցուն են աղմուկով եւ անձկութեամբ: Տիրապետելու բնազդն ու ետապաշտութիւնը ազգերու, գազանային անգրութիւններու կ'առաջնորդեն մարդը իր ընկեր մարդուն դէմ, ախտաբանական նկատարար հագնելու չափ: Պատեազմներու եւ խռովութիւններու պատճառներէն մին ալ հոգեկան այլացումն է, աւելի անգութ բառով մը՝ այլասերումը: Նոր աշխարհը որ ի լինելութեան է, արբեր արժէքներու կը նայի, մարդէն ու նրամարտութենէն աւելի կը գնահատէ ուժը, ցեղը, զանգուածը: Արդարութիւնը տիրապետած է ուժէն — ահա պատկերը մեր ժամանակին:

Ժողովուրդ Հայոց, իմ եւ Մերոց Յակոբեանց զինուորեալ Միաբանութեան սիրտը քեզի է որ կը բացուի նորէն, նուիրական այս գիշերով, եւ կեցած Սուրբ Ծննդեան վեհավայրին մէջ, քեզի կը փոխանցենք աւետիսը, զոր օր մը հովիւներն ու հրեշտակները տուին աշխարհին, եւ որուն հաւաստիքը քան զարեւել է վեր կը լեցնէ ու կը զօրացնէ մեր քրիստոնէական կեանքը: Շարունակէ հաւաստիք միտուսի Ծնունդին եւ մարդուն աստուածացումին, եւ մայրացուր հոգիդ այս գիշերուան մեծ խորհուրդովը, նման քան աստուածարեալ պապերուդ, որոնք գիտէին զեղումի հանել գիշերները, բանալու դռները երկրնին, իջեցնելով Աստուածորդին իրենց արտերուն մէջ եւ Մսուրի գաղջ ընձանութեան:

Աղօթենք ի սրտէ, որ Բեթղեհէմի երկնին մրայ յայտնուած աստիճան լոյսովը լուսաւորուին աշխարհի ղեկավարներուն միտքերը, տեսնելու համար խաղաղութեան իրական համբան, օրպէսզի կարեղի ըլլայ սերն ու խաղաղութիւնը հաստատել այս երկրի վրայ, Աստուծոյ փառքին եւ մարդերու բարիքին համար. ամէն:

19 Յունուար 1982